«Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆ ՊԵՏՐՈՍ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ

Հոկտեմբերի 19-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ շքանշանի հանձնման հանդիսավոր արարողություն: Ամենայն Հայոց Հայրապետը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանով պարգևատրեց Շարժայում (Արաբական Միացյալ Էմիրություններ) բնակվող տիար Պետրոս Ասլանյանին՝ հանդեպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, Հայրենիքը ու հարազատ ժողովուրդը ցուցաբերած և գործերով վկայված սիրո համար:

Արարողության սկզբում Պետրոս Ասլանյանի կյանքի ուղին և բարեգործական բեղուն գործունեությունը ներկայացրեց «Տիգրան Մեծ» հրատարակչատան փոխտնօրեն Լյուդվիգ Հարությանը: Այնուհետև «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո բերվեց Հայրապետական Սրբատառ Կոնդակը, որն ընթերցվեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս. Խաչատրյանի կողմից:

«...Գոհունակությամբ ենք անդրադառնում բազմաբեղուն այն գործունեությանը, որը տասնյակ տարիներ իրականացնում եք Դուք ազգային-հասարակական մեր կյանքում: Ծնվելով ու հասակ առնելով հայ կյանքի ավանդույթներով հարուստ Եթովպիայում, Դուք երիտասարդ տարիքից ինքնաբուխ լծվեցիք ազգանվեր ծառայության՝ ի սպաս դնելով Ձեր ջանքերը, ժամանակը և նյութական կարողությունները: Ծառայանվեր նույն ոգով Դուք շարունակեցիք Ձեր ծառայությունները մեր ժողովրդին նաև Արաբական Միացյալ Էմիրություններում՝ դրսևորելով հայ համայնքը միշտ շեն ու պայծառ տեսնելու Ձեր նախանձախնդրությունը:

Համայնքային կյանքում Ձեր ծառայություններին զուգընթաց Դուք գովելի մասնակցություն եք բերում նաև Հայրենի մեր Երկրի զորացմանն ու առաջընթացին՝ Ձեր ավանդը բերելով Միացյալ Էմիրություններում ՀՀ Դեսպանության բացման, ինչպես և Դեսպանատան շենքի կառուցման աշխատանքներին:

Հայրապետիս համար ուրախություն է հաստատել նաև, որ Ձեր կյանքի ողջ ընթացքին Դուք դրսևորել եք անկեղծ սեր ու նվիրում հանդեպ լուսո խորան Սուրբ Էջմիածինը և տարբեր հանձնառություններով Ձեր աջակցությունը բերել Մայր Աթոռիս առաքելության իրականացմանը Քրիստոսասեր մեր ժողովրդի կյանքում»,- ասված է Հայրապետական Կոնդակում:

Կոնդակի ընթերցումից հետո Ամենայն Հայոց Հայրապետը պրն Ասլանյանի կուրծքը զարդարեց «Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանով՝ գնահատելով մեծարյալի ազգօգուտ ու եկեղեցաշեն արդյունաշատ վաստակը: Ապա Նորին Սրբությանն իր շնորհակալությունն ու երախտագիտությունը հայտնեց Պետրոս Ասլանյանը:

Արարողության ավարտին իր Հայրապետական գնահատանքն ու օրհնությունը մեծարյալին ուղղեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «...Տարիներ ի վեր ճանաչում ենք

Ձեզ և որքան շփվել ու մոտիկից ճանաչել ենք, այնքան սիրել ենք Ձեզ, Ձեր ազնիվ, հավատավոր, եկեղեցասեր ու ազգասեր ոգին, տեսել ենք անկեղծությունն ու խոնարհությունն անձիդ մեջ և բարձրորեն գնահատել: ...Այսօր Մենք զարդարում ենք Ձեր կուրծքը «Ս. Ներսես Շնորհալի» բարձր շքանշանով, որպես գնահատություն Ձեր բոլոր ծառայությունների, որ բերել եք մեր ազգին, մեր Եկեղեցուն ինչպես Եթովպիայում ու Արաբական Էմիրություններում, այնպես և Մայր Հայրենիքում: Մենք ուրախ ենք Ձեր վաստակի համար, որ Ձեր ազնիվ հոգով Դուք արձանագրել եք եկեղեցական մեր կյանքից ներս, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեության մեջ...»,- մասնավորաբար ասաց Նորին Սրբությունը՝ մաղթելով փիար Ասլանյանին նույն նախանձախնդիր, հավատավոր ու նվիրյալ ոգով շարունակել ծառայությունն ի նպաստ Հայրենիքի շինության և Եկեղեցու պայծառության:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ